

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի, 13-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 1335-Ա/2 հրամանով հաստատված ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի աշխատանքային ծրագիրը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի համաձայնությունը ([01/32176-17](#), 2017-11-07), համաձայն ՀՀ կրթության պետական տեսչության պետի՝ 2017 թվականի նոյեմբերի 8-ի N 92-Ա կարգադրության՝ ՀՀ կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն ապահովելու նպատակով 2017 թվականի նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 7-ը Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ քաղաքապետարան) աշխատակազմի հանրակրթության վարչությունում (այսուհետ՝ վարչություն) իրականացվել է ուսումնասիրություն հետևյալ խմբով՝ ՀՀ կրթության պետական տեսչության պետի տեղակալ, ուսումնասիրություն իրականացնող խմբի ղեկավար Ռաիսա Գալստյան, անդամներ՝ Հանրակրթության տեսչավորման բաժնի պետ Արմեն Վիրաբյան, նույն բաժնի գլխավոր մասնագետներ՝ Լաուրա Սամվելյան, Աիդա Բարսեղյան, Գայանե Ինիջյան, Արամ Խաչատրյան, Վերլուծության և գնահատման բաժնի պետի տեղակալ Գայանե Շահնազարյան, նույն բաժնի գլխավոր մասնագետներ՝ Լեյլի Սարգսյանց, Աղավնի Աղաբեկյան, Արևելյան տարածքային բաժնի գլխավոր մասնագետ Արմենուհի Բարսեղյան:

Ուսումնասիրությունն իրականացվել է համաձայն ՀՀ կրթության պետական տեսչության պետի կարգադրությանը կից հարցաշարի (հավելված), որը նախապես ուղարկվել է Երևանի քաղաքապետին:

Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատված է ընդունվել 2014 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2017 թվականի նոյեմբերի 15-ը:

Հարցաշարի 3-րդ, 4-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 15-րդ, 19-րդ, 20-րդ և 23-րդ կետերին առնչվող տեղեկատվությունը ուսումնասիրվել է ՀՀ կրթության պետական տեսչությունում՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ դպրոց) և նախադպրոցական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ մանկապարտեզ) տնօրենների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա, 2017 թվականի նոյեմբերի 16-30-ը:

Դպրոցների տնօրենների ներկայացրած տեղեկատվության համադրումը և հարցաշարի մյուս կետերին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրությունն իրականացվել են վարչությունում՝ 2017 թվականի դեկտեմբերի 1-7-ը:

1. Վարչության կանոնադրության առկայությունը, հաստատումը, կանոնադրական պահանջների կատարումը

ՀՀ կրթության պետական տեսչության պետի՝ 2012 թվականի մայիսի 7-ի N 32-Ա կարգադրությամբ 2012 թվականին իրականացված ուսումնասիրության արդյունքում վարչության կանոնադրության մեջ հայտնաբերված թերությունները և հակասությունները վերացվել են, և Երևանի քաղաքապետի՝ 2015 թվականի հունիսի 4-ի N 1704-Ա որոշմամբ հաստատված կանոնադրությունը ներառում է կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունները:

2. Վարչության 2016 թվականի տարեկան և 2017 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքային ծրագրի կատարողականը

Վարչության 2016 թվականի տարեկան և 2017 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքային ծրագրերի կատարողականների ուսումնասիրությունից պարզվել է, որ 2016 թվականի տարեկան ծրագրի 52-րդ («Սովորողների կողմից պետական կրթական չափորոշյով նախատեսված գիտելիքների յուրացման, ինչպես նաև որակյալ կրթության ապահովման նպատակով դպրոցներում համապատասխան ուսումնասիրությունների կազմակերպում») և 80-րդ («Հանրակրթության կրթակարգի կիրարկումն ապահովելու նպատակով ԿԱԻ-ի աջակցությամբ ուսուցիչների և դպրոցների ղեկավար աշխատողների մասնախմբային պարապմունքների իրականացում») կետերում նշված աշխատանքները չեն կատարվել: Նշված աշխատանքները ներառվել են նաև 2017 թվականի տարեկան ծրագրում և մինչև տեսչության ուսումնասիրությունն սկսելու օրը՝ նոյեմբերի 16-ը, դեռ չէին իրականացվել:

Թերի է կատարվել 2016 թվականի տարեկան ծրագրի 66-րդ («Դասագրքերի, թեստերի, ուսուցիչների ձեռնարկների վերաբերյալ մանկավարժների կարծիքների հավաքագրում, ինչպես նաև սոցիալական հարցումների անցկացում ՀՀ ԿԳՆ ԿԱԻ աջակցությամբ») կետում նշված աշխատանքը:

3. Քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունների հաստատումը, լիցենզիաների առկայությունը

Դպրոցների կանոնադրությունները (նոր խմբագրությամբ) հաստատվել և պետական գրանցում են ստացել 2017 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

«Երևանի Մ. Իշխանի անվան N 5 հիմնական դպրոց», «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան N 10 հիմնական դպրոց», «Երևանի Վ. Վաղարշյանի անվան N 80 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կանոնադրությունները վերակազմակերպումից հետո 2017 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ դեռևս փոփոխված չէին:

Չի ապահովվել ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի «Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «Երևանի N 99 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» N 1025-Ն որոշման

(ուժի մեջ է մտել 2017 թվականի սեպտեմբերի 16-ին) 8-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջի կատարումը («Առաջարկել Երևանի քաղաքապետին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել՝ 3) «Երևանի Մ. Իշխանի անվան N 5 հիմնական դպրոց», «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան N 10 հիմնական դպրոց», «Երևանի Վ. Վաղարշյանի անվան N 80 հիմնական դպրոց», «Երևանի N 99 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրություններում սույն որոշումից բխող համապատասխան փոփոխությունների կատարումը և պետական գրանցումը»):

Ընդհանուր թվով 21 դպրոցների սովորողների սահմանային տեղերի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններն (լիցենզիաներն) առկա չեն կամ դրանց ընդունումն ընթացքի մեջ է:

ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով սահմանված սովորողների **սահմանային տեղերը գերազանցել են թվով 46 դպրոցներ** (հավելվածում նշված են դեղին գույնով):

Տեղեկավորությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-HUH» հավելվածի «Կանոնադրություն» բաժնում:

Մանկապարտեզներից 157-ի կանոնադրությունները հաստատվել են 2012 թվականին, բացառությամբ **հ. 66** (2015թ.), **հ. 83** (2017թ.), **հ. 166** (2017թ.) մանկապարտեզների:

Նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու թույլտվություն (լիցենզիա) չունեն **հ.հ. 19, 33, 34, 80, 104, 131, 149, 159** մանկապարտեզները:

Խախտվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը («Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն **լիցենզիայի առկայության դեպքում**»):

ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով սահմանված սաների **սահմանային տեղերը գերազանցել են թվով 122 (76 %) մանկապարտեզներ:**

Մանկապարտեզների խմբերը գերբեռնված են (կրտսեր 1-ին խմբերում որպես խախտում չի արձանագրվել մինչև 22 երեխան, մնացած խմբերում՝ մինչև 33-ը):

Տեղեկավորությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-NUH» հավելվածի «Տեղեկություններ» բաժնում:

4. Ուսումնական հաստատությունների անվանակոչությունների հիմքերը, կանոնադրություններում համապատասխան փոփոխությունների կատարումը

Դպրոցների և մանկապարտեզների անվանակոչություններն իրականացվել են սահմանված կարգով:

5. Կրթության կառավարման պետական լիազորված մարմնի, Երևանի քաղաքապետի՝ կրթության բնագավառին առնչվող հրամանների, հրահանգների, հանձնարարականների, որոշումների, մեթոդական երաշխավորությունների կատարումը

Կրթության կառավարման պետական լիազորված մարմնի հրամանների, Երևանի քաղաքապետի՝ կրթության բնագավառին առնչվող որոշումների կատարման ընտրանքային ուսումնասիրությունից պարզվել է՝

1) չեն պահպանել օրինակելի ուսումնական պլանի պահանջները (դպրոցական բաղադրիչի բաշխում, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության ապահովում, երաշխավորված առարկայական ծրագրերի առկայություն և այլն)։

2) դպրոցների և մանկապարտեզների մանկավարժական կադրերի ընտրության և նշանակման գործընթացներն իրականացվել են խախտումներով։

3) խախտվել են ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգի տարբեր պահանջներ։

4) գերազանցվել է դպրոցների սովորողների և մանկապարտեզների սաների սահմանային տեղերի թիվը։

5) չեն կատարվել մանկապարտեզների տնօրենների թափուր տեղի մրցույթի կարգի պահանջները։

6. Դպրոցի կառավարման խորհրդի, տնօրենի՝ ՀՀ օրենսդրության և դպրոցի կանոնադրության պահանջներին հակասող որոշումները, հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները կասեցնելը կամ ուժը կորցրած ճանաչելը

Ըստ վարչության ներկայացրած տեղեկատվության՝ դպրոցի կառավարման խորհրդի, տնօրենի՝ ՀՀ օրենսդրության և դպրոցի կանոնադրության պահանջներին հակասող որոշումները, հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները չեն կասեցվել կամ ուժը կորցրած չեն ճանաչվել։

7. Կրթության բովանդակությանը համապատասխան ուսումնական հաստատությունների կրթական գործընթացի կազմակերպումը, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարումը, դասացուցակների պահպանումը

Կրթության բովանդակությանը համապատասխան դպրոցների կրթական գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարման, դասացուցակների պահպանման ուսումնասիրությունից պարզվել է, որ հետևյալ 36 դպրոցներում առկա են խախտումներ։

Երևանի հ. 2 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարում VII դասարանում «Ազգային երգ ու պար» առարկայի 1,5 ժամը հատկացվել է «Ֆիզկուլտուրա» առարկայի դասաժամերից։

Երևանի հ. 6 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարվա IX դասարանում «Ֆիզկուլտուրա» առարկայից առկա է 14 ժամ գերակատարում:

Երևանի հ. 13 հիմնական դպրոց

2016-2017 և 2017-2018 ուսումնական տարիներին II դասարաններում ուսումնասիրվում է օտար լեզու՝ «Անգլերեն»: Առկա է ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության պետի 12.10.2004թ. N07-4/2319 գրությունը, որում նշված է. «Հիմք ընդունելով Երևանի թիվ դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկությունը՝ ՀՀ ԿԳ նախարարությունը թույլատրում է սկսած 2004-2005 ուստարվանից առաջին դասարանից անգլերեն լեզվի և ռուսաց լեզվի դասավանդումը ծրագրային նյութին համապատասխան»:

Երևանի հ. 14 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարում II և III դասարաններում ուսումնասիրել են 2-ական ժամ «Արաբերեն», ինչի հետևանքով առաջացել է սովորողների շաբաթական 2 ժամ գերբեռնվածություն: Առկա է Մ. Ղազարյանի 21.07.2015թ. N 04/07.1/8398-15 գրությունը, որով ուղարկվել է ԿԱԻ-ի կարծիքը ծրագրի վերաբերյալ: ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից ծրագիրը չի հաստատվել:

Երևանի հ. 22 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարվա V և VI դասարաններում, 2017-2018 ուսումնական տարվա V-VII դասարաններում «Ազգային երգ ու պար» առարկային հատկացվել է 1 ժամ՝ 1,5 ժամի փոխարեն:

2016-2017 ուսումնական տարվա VII և VIII դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայից առկա է 6-ական ժամ թերակատարում: VII դասարանում «Հայոց լեզու» առարկայից առկա է 4 ժամ թերակատարում:

Երևանի հ. 26 հիմնական դպրոց

2016-2017, 2017-2018 ուսումնական տարիներին V-IX դասարաններում III օտար լեզուն (Ֆրանսերեն) ուսումնասիրվում է 1 ժամով՝ նվազագույնը 1,5 ժամի փոխարեն:

Երևանի հ. 27 հիմնական դպրոց

Ըստ տնօրենի բացատրության՝ դասարանների մի մասը ուսումնասիրել է «Ֆրանսերեն» առարկան, մյուս մասը՝ «Անգլերեն»:

2014-2015 ուսումնական տարվանից II (հիմնական) օտար լեզուն դարձել է անգլերենը, III օտար լեզուն՝ ֆրանսերենը: Առկա չէ ՀՀ կրթության և գիտության նախարարության թույլտվությունը:

Երևանի հ. 35 հիմնական դպրոց

2017-2018 ուսումնական տարում ռուսերենով ուսուցմամբ V, VI և VII դասարաններում «Ազգային երգ ու պար» առարկային հատկացվել է 1 ժամ՝ 1,5-ի փոխարեն:

2016-2017 ուսումնական տարում ռուսերենով ուսուցմամբ V և VI դասարաններում «Ազգային երգ ու պար» առարկային հատկացվել է 1 ժամ՝ 1,5 ժամի փոխարեն:

Երևանի հ. 36 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարվա VII դասարանում «Ֆիզիկա», «Կենսաբանություն» առարկաներից առկա են 4-ական ժամ թերակատարումներ:

Երևանի հ. 53 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարում VIII դասարանում «Հայոց պատմություն» առարկայից առկա է 6 ժամ թերակատարում:

Երևանի հ. 55 հիմնական դպրոց

«Տեխնոլոգիա» առարկան չի ուսումնասիրվում՝ համապատասխան մասնագետ չլինելու պատճառով:

Երևանի հ. 66 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարվա V դասարանում «Ազգային երգ ու պար» առարկայի շաբաթական 1,5 ժամն ամբողջովին տրամադրվել է «Ֆիզկուլտուրա» առարկայի ժամաքանակից:

Երևանի հ. 68 հիմնական դպրոց

2016-2017 և 2017-2018 ուսումնական տարիների V դասարաններում «Ազգային երգ ու պար» առարկայի 1,5 ժամը հատկացվել է «Ֆիզկուլտուրա» առարկայի դասաժամերից:

Երևանի հ. 74 հիմնական դպրոց

1997-1998 ուսումնական տարվանից սկսած դպրոցի V-IX դասարաններում հունարենն ուսումնասիրվել է որպես III օտար լեզու: Ներկայումս VII-IX դասարաններում «Հունարեն» առարկան չի ուսումնասիրվում, քանի որ, ըստ տնօրենի բացատրության, ուսուցիչը հրաժարվում է պարապել նշված դասարաններում: Նոր ուսուցիչ ընդունելու համար մրցույթ չի հայտարարվել, ծրագրի շարունակականությունը չի ապահովվել:

2016-2017 ուսումնական տարվանից հունարենն ուսումնասիրվել է 1-ական ժամով: Ուսումնասիրության ընթացքում տնօրենը չի ներկայացրել հունարենի համապատասխան ծրագրերը՝ պարզելու համար՝ քանի ժամի համար են դրանք նախատեսված:

Չեն պահպանվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 1997թ. հուլիսի 9-ի N 140-Մ հրամանի պահանջները՝ «Երևանի թիվ 74 միջնակարգ դպրոցում 1997-1998 ուստարվանից սկսած սկսել հունարենի ուսուցումը: Հունարենի ուսուցմանը հատկացնել դպրոցական պարտադիր դասաժամերը»:

2016-2017 ուսումնական տարվա VII^u դասարանում «Ռուսաց լեզու» առարկայից առկա է 3 ժամ թերակատարում, «Հայոց պատմություն» առարկայից՝ 5 ժամ, «Համաշխարհային

պատմություն» առարկայից՝ 3 ժամ: VIII^Ա դասարանում «Աշխարհագրություն» առարկայից առկա է 8 ժամ թերակատարում, «Հայոց պատմություն» առարկայից՝ 7 ժամ: IX^Ա դասարանում «Աշխարհագրություն» առարկայից առկա է 5 ժամ թերակատարում:

Երևանի հ. 78 հիմնական դպրոց

2017-2018 ուսումնական տարվա ֆրանսերենի խորացված ուսուցմամբ V դասարանում III օտար լեզուն (անգլերեն) ուսումնասիրվում է 1 ժամով՝ 1,5 ժամի փոխարեն:

2016-2017 ուսումնական տարվա VI դասարանում, 2017-2018 ուսումնական տարվա VI և VII դասարաններում «Ազգային երգ ու պար» առարկային 0,5 ժամը հատկացվել է «Երաժշտություն» առարկայից, հետևաբար «Երաժշտություն» առարկան VI և VII դասարաններում չի ուսումնասիրվում:

Երևանի հ. 80 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարվա V դասարանում, 2017-2018 ուսումնական տարվա V և VII դասարաններում «Ազգային երգ ու պար» առարկայի 1,5 ժամը հատկացվել է «Ֆիզկուլտուրա» առարկայի դասաժամերից:

Երևանի հ. 85 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարում «Հայոց լեզու» առարկայից VII^Ա դասարանում առկա է 6 ժամ թերակատարում, VIII^Ա դասարանում՝ 4 ժամ, IX դասարանում՝ 5 ժամ: «Գրականություն» առարկայից VII^Ա դասարանում առկա է 8 ժամ գերակատարում, VIII^Ա դասարանում՝ 4 ժամ:

Երևանի հ. 93 միջնակարգ դպրոց

2016-2017 ուսումնական տարում VI դասարանում «Երաժշտություն» առարկան չեն ուսումնասիրել, ժամերը տրվել են «Ազգային երգ ու պար» առարկային:

Երևանի հ. 113 միջնակարգ դպրոց

2016-2017 ուսումնական տարվա X^Գ դասարանում «Հայոց լեզու» առարկայից առկա է 5 ժամ գերակատարում, «Ֆիզիկա» առարկայից՝ 4 ժամ թերակատարում: XII^Ա դասարանում «Հայոց լեզու» առարկայից առկա է 4 ժամ թերակատարում, «Հայ գրականություն», «Անգլերեն» առարկաներից՝ 5-ական ժամ թերակատարում:

Երևանի հ. 128 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարում VI դասարանում «Երաժշտություն» առարկան չեն ուսումնասիրել, ժամերը տրամադրվել են «Ազգային երգ ու պար» առարկային:

2017-2018 ուսումնական տարում VI դասարանի «Երաժշտություն» առարկայի՝ օրինակելի ուսումնական պլանով նախատեսված 0,5 և VII դասարանի «Կերպարվեստ» առարկայի՝ օրինակելի ուսումնական պլանով նախատեսված 0,5 ժամերը տրամադրվել են «Ազգային երգ ու պար» առարկային:

Երևանի հ. 129 հիմնական դպրոց

2016-2017, 2017-2018 ուսումնական տարիներին V դասարանում «Ազգային երգ ու պար» առարկային 1,5 ժամը հատկացվել է «Ֆիզկուլտուրա» առարկայից:

2017-2018 ուսումնական տարում VII դասարանի 1 սովորողի ուսուցումը կազմակերպվում է տնային պայմաններում: Օրինակելի ուսումնական պլանով նախատեսված «Համաշխարհային պատմություն», «Քիմիա» առարկաները չեն ուսումնասիրվում, ուսումնասիրվում է օրինակելի ուսումնական պլանով չնախատեսված «Տեխնոլոգիա» առարկան:

2017-2018 ուսումնական տարում VIII դասարանի 2 սովորողի ուսուցումը կազմակերպվում է տնային պայմաններում: Օրինակելի ուսումնական պլանով նախատեսված «Քիմիա» առարկան չի ուսումնասիրվում, ուսումնասիրվում է օրինակելի ուսումնական պլանով չնախատեսված «Տեխնոլոգիա» առարկան:

Երևանի հ. 131 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարում VIII^u դասարանում «Կենսաբանություն» առարկայից առկա է 5 ժամ թերակատարում:

Երևանի հ. 133 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարվա VII և VIII դասարաններում «Ռուսաց լեզու» առարկայից առկա է 4-ական ժամ թերակատարում:

Երևանի հ. 135 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարվա VII^r դասարանում «Ֆիզկուլտուրա» առարկայից առկա է 4 ժամ թերակատարում:

Երևանի հ. 151 հիմնական դպրոց

2016-2017 և 2017-2018 ուսումնական տարիներին V և VII դասարաններում «Ազգային երգ ու պար» առարկայի 1,5 ժամերը տրամադրվել են «Ֆիզկուլտուրա» առարկայի դասաժամերից:

Երևանի հ. 152 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարվա VII դասարանում «Ֆիզկուլտուրա» առարկայից առկա է 4 ժամ թերակատարում (ըստ տնօրենի՝ ուսուցչի բացակայության պատճառով):

Երևանի հ. 160 հիմնական դպրոց

2016-2017 և 2017-2018 ուսումնական տարիների V-IX դասարաններում (բացառությամբ 2016-2017 ուսումնական տարվա VI դասարանի) III օտար լեզուն (ֆրանսերեն) ուսումնասիրվում է 1 ժամով:

Երևանի հ. 161 հիմնական դպրոց

VIII^f դասարանում «Ինֆորմատիկա» առարկայից առկա է 4 ժամ թերակատարում:

Երևանի հ. 163 հիմնական դպրոց

2017-2018 ուսումնական տարում ռուսերենի խորացված ուսուցմամբ V դասարանում «Ազգային երգ ու պար» առարկան ուսումնասիրվում է շաբաթական 1 ժամով:

Երևանի հ. 164 հիմնական դպրոց

2017-2018 ուսումնական տարում ռուսերենով ուսուցմամբ V դասարանում «Ազգային երգ ու պար» առարկան չեն ուսումնասիրում:

Երևանի հ. 168 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարվա VI դասարանում III օտար լեզուն (Ֆրանսերեն) ուսումնասիրվել է 1 ժամով՝ նվազագույնը 1,5 ժամի փոխարեն:

Երևանի հ. 173 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարում VII^բ դասարանում «Հայոց պատմություն» առարկայից առկա է 6 ժամ թերակատարում (ըստ տնօրենի՝ հիվանդության պատճառով):

Երևանի հ. 177 հիմնական դպրոց

2016-2017 ուսումնական տարվա VII^ա դասարանում «Հայոց լեզու» առարկայից առկա է 4 ժամ թերակատարում:

Երևանի հ. 186 հիմնական դպրոց

2016-2017 և 2017-2018 ուսումնական տարիներին V դասարանում 3-րդ օտար լեզուն ուսումնասիրվում է շաբաթական 1 ժամով: Առկա է Մ. Ղազարյանի 09.01.2013թ. N 04/07.1/34-13 գրությունը, որում նշված է. «...ՀՀ կրթության և գիտության նախարարությունը չի առարկում, որպեսզի Երևանի թիվ 186 դպրոցում երրորդ օտար լեզվի՝ Ֆրանսերենի ուսուցումը 5-րդ դասարանում կազմակերպվի 1 դասաժամով՝ ապահովելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի հունիսի 28-ի N 653-Ա/Ք հրամանով հաստատված հանրակրթական միջին դպրոցի «Ֆրանսերեն» առարկայի ծրագրային պահանջները:

2016-2017 ուսումնական տարում VI և 2017-2018 ուսումնական տարում VI և VII դասարաններում «Ազգային երգ ու պար» առարկան ուսումնասիրվում է շաբաթական 1 ժամով:

Երևանի հ. 200 հիմնական դպրոց

2016-2017, 2017-2018 ուսումնական տարիներին «Պարսկերեն» առարկան ուսումնասիրվում է 2 ժամով, որից 1 ժամը տրամադրվում է դպրոցական բաղադրիչ ժամաքանակից, 1 ժամը՝ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի կողմից հատկացված վարձավճարի հաշվին (1-ական ժամ պարսկերենն ամրագրվել է դասացուցակում և III-VII դասարաններում առաջացել է շաբաթական ուսումնական գերբեռնվածություն):

Երևանի «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի ուսումնական պլանը չի համապատասխանում օրինակելի ուսումնական պլաններից ոչ մեկին: Կրթահամալիրի ուսումնական պլանը բոլոր աստիճանների համար ունի 2 բաղկացուցիչ: Առաջին և երկրորդ աստիճանների համար

կազմված ուսումնական պլանների առաջին բաղկացուցիչները համապատասխանում են ՀՀ կրթության և գիտության նախարարի 20.06.2017թ. N 711-Ն հրամանով հաստատված հավելված 1.1-ի Աղյուսակ 1-ին: Կրթահամալիրի կանոնադրության 20-րդ կետի համաձայն՝ դպրոցը, ըստ կրթական մակարդակների, իրականացնում է հանրակրթական և **նախամասնագիտական (կերպարվեստ)** ծրագրեր: Սակայն երրորդ աստիճանի համար կազմված ուսումնական պլանի առաջին բաղկացուցիչը համապատասխանում է օրինակելի ուսումնական պլանի Աղյուսակ 4-ին (Ավագ դպրոցի **արհեստագործական** հոսքի ուսումնական պլան): Կրթահամալիրի ուսումնական պլանի երկրորդ բաղկացուցիչը չի համապատասխանում ո՛չ մասնագիտացված ուսումնական հաստատության, ո՛չ ավագ դպրոցի արհեստագործական հոսքի ուսումնական պլանների մասնագիտական բաղադրիչներին:

ՀՀ օրենսդրության պահանջը	Խախտում թույլ տված դպրոցը
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2014 թ. օգոստոսի 26-ի «Հանրակրթական հիմնական դպրոցի 5-րդ դասարանի «Ազգային երգ ու պար» և «Երաժշտություն» առարկաների փորձնական ծրագրերը հաստատելու և ուսումնական հաստատություններում փորձարկելու մասին» N 829-Ա/Ք հրամանի պահանջ. «Ազգային երգ ու պար» (5-րդ, դ.) առարկային հարկացվում է շաբաթը 1,5 դասաժամ, ընդամենը՝ 51 ժամ:</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2014 թ. օգոստոսի 26-ի N 829 Ա/Ք հրամանում փոփոխություններ կատարելու մասին 11.09.2014թ. N 897 Ա/Ք հր.</p>	<p>հ. 35 հ/դ, հ. 66 հ/դ, հ. 151 հ/դ, հ. 164 հ/դ, հ. 68 հ/դ, հ. 80 հ/դ, հ. 22 հ/դ, հ. 163 հ/դ, 129 հ/դ</p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի «Հանրակրթական հիմնական դպրոցի 7-րդ դասարանի «Ազգային երգ ու պար» առարկայի փորձնական ծրագիրը հաստատելու մասին 26.08.2016թ. N 831-Ա/2 հրաման (2-րդ կետ)</p>	<p>հ. 186 հ/դ, հ. 80 հ/դ, հ. 35 հ/դ, հ. 2 հ/դ, հ. 22 հ/դ, 151 հ/դ</p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի «Հանրակրթական հիմնական դպրոցի 6-րդ դասարանի «Ազգային երգ ու պար» առարկայի ծրագիրը հաստատելու մասին 03.09.2015թ. N 760-Ա/Ք հրաման</p>	<p>հ. 186 հ/դ, հ. 35 հ/դ, հ. 22 հ/դ</p>

<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016 թվականի հունիսի 27-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 670-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 19-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ</p>	<p>հ. 13 հ/դ, հ. 14 հ/դ, 26 հ/դ, 160 հ/դ, 163 հ/դ, 168 հ/դ</p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016 թվականի հունիսի 27-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 670-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ով սահմանված շաբաթական ծանրաբեռնվածություն</p>	<p>հ. 14 հ/դ</p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2017 թվականի հունիսի 20-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու</p>	<p>հ. 200 հ/դ</p>

մասին» N 711-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ով սահմանված շաբաթական ծանրաբեռնվածություն	
ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016 թվականի հունիսի 27-ի N 670-Ն և 2017 թվականի հունիսի 20-ի N 711-Ն հրամաններով հաստատված հաստատության 2016-2017 և (կամ) 2017-2018 ուսումնական տարիների ուսումնական պլանների 21-րդ կետի 2-րդ ենթակետ	հ. 186 հ/դ, հ. 78 հ/դ, հ. 160 հ/դ, հ. 168 հ/դ, հ. 26 հ/դ, հ. 74 հ/դ, 56 հ/դ, 48 հ/դ, 125 հ/դ
ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով հաստատված առարկայական ծրագրերով սահմանված ժամաքանակի խախտում	հ. 173 հ/դ, հ. 113 հ/դ, հ. 85 հ/դ, հ. 177 հ/դ, հ. 53 հ/դ, հ. 131 հ/դ, հ. 152 հ/դ, հ. 133 հ/դ, հ. 135 հ/դ, հ. 74 հ/դ, հ. 161 հ/դ, հ. 6 հ/դ, հ. 22 հ/դ, հ. 36 հ/դ
ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016 թվականի հունիսի 27-ի N 670-Ն և 2017 թվականի հունիսի 20-ի N 711-Ն հրամաններով հաստատված հաստատության 2016-2017 և (կամ) 2017-2018 ուսումնական տարիների ուսումնական պլանների Հավելված 1.1-ի Աղյուսակ 1-ով, Աղյուսակ 9-ով սահմանված պետական պարտադիր առարկաների բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջների թերակատարում կամ չկատարում	հ. 128 հ/դ, հ. 129 հ/դ, հ. 78 հ/դ, հ. 55 հ/դ, հ. 93 մ/դ
ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016 թվականի հունիսի 27-ի N 670-Ն և 2017 թվականի հունիսի 20-ի N 711-Ն հրամաններով հաստատված հաստատության 2016-2017 և (կամ) 2017-2018 ուսումնական տարիների ուսումնական պլանների 21-րդ կետի 3-րդ ենթակետ	հ. 27 հ/դ
ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016 թվականի հունիսի 27-ի N 670-Ն և 2017 թվականի հունիսի 20-ի N 711-Ն հրամաններով հաստատված հաստատության 2016-2017 և (կամ) 2017-2018 ուսումնական տարիների ուսումնական պլանների Հավելված 1.1-ի Աղյուսակ 1-ով, Աղյուսակ 9-ով սահմանված պետական պարտադիր առարկաների բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջների թերակատարում կամ չկատարում	«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր
ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2017 թվականի հունիսի 20-ի N 711-Ն հրամանով հաստատված հաստատության 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական պլանների Հավելված 1.1-ի Աղյուսակ 9	հ. 129 հ/դ

8. Ուսումնական հաստատությունների տարիֆիկացիոն (հաստիքային) ցուցակների հաստատումը

Դպրոցների տարիֆիկացիոն (հաստիքային) ցուցակները ներկայացվել են հաստատման 01.09.2017թ.-10.09.2017թ. ժամանակահատվածում, հաստատվել են՝ 19.09.2017թ.-10.10.2017թ.:

Մանկապարտեզների հաստիքային ցուցակները հաստատված են 2014-2017 թվականներին, իսկ հ. 157 մանկապարտեզինը՝ 2012 թվականին:

Ըստ մանկապարտեզների տնօրենների՝ հաստիքային ցուցակները հաստատվում են այն դեպքում, երբ դրանց մեջ փոփոխություն է կատարվում:

9. Ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում ուսումնական հաստատություններ աշխատանքի ընդունված մանկավարժական աշխատողների մասնագիտական որակավորման համապատասխանությունը, ուսուցչի թափուր տեղի համար կայացած մրցույթի կազմակերպմանն ուղղված գործողությունները

Ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում **Երևանի 155** դպրոցներից խախտում չի հայտնաբերվել **75-ում (48 %)**:

Երևանի 80 դպրոցներում (52 %) հայտնաբերվել է թվով 274 խախտում (ներառված չեն կարգի խախտմամբ մինչև մեկ ամիս ժամկետով ժամանակավոր փոխարինումները, իսկ նմանափոխ խախտումների քազմակի կրկնությունները նշված են որպես մեկ խախտում), որից՝

1) ուսուցչի՝ համապատասխան որակավորում կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ ունենալու պահանջի խախտում (այդ թվում՝ ժամանակավոր փոխարինումները)՝ 38 դպրոց (58 ուսուցիչ)։

2) մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով սահմանված որակավորման պահանջների խախտում՝ 59 դպրոց (68 մանկավարժական աշխատող)։

3) ուսուցչի թափուր տեղի համալրում ոչ մրցույթային հիմունքներով՝ 11 դպրոց (23 ուսուցիչ)։

4) ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի (հայտարարության ժամկետ, հանձնաժողովի կազմ, մրցույթի հայտարարություն, հանձնաժողովի ձևավորում, դասաժամերի տրամադրում)՝ 32 դպրոց (36 խախտում)։

5) մինչև մրցույթի կայանալը համապատասխան մասնագիտական որակավորում չունեցող անձանց որոշակի ժամկետով աշխատանքի ընդունում՝ 25 դպրոց (56 անձ)։

6) մրցույթի մասնակցություն՝ 23 դպրոց (33 խախտում)։

Ստորև բերված աղյուսակում նշված են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները և դրանք խախտած դպրոցները։

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք	
26-րդ հոդվածի 1-ին մասի («Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական)	հհ. 35 հ/դ, 101 մ/դ (2), 10 հ/դ (2), 24 հ/դ (3), 157 հ/դ, 152 հ/դ, 26 հ/դ (3), 37 հ/դ, Հր. Մաթևոսյանի անվ. հ/դ, 66 հ/դ, 27 հ/դ, 17 հ/դ, 7 հ/դ (3), 172 հ/դ, 128 հ/դ (2), 177 հ/դ, 102 հ/դ, 90 հ/դ (2), 162 հ/դ, 19 հ/դ, 50 հ/դ, 123 հ/դ (2), 44 հ/դ, 93 մ/դ, 196 հ/դ,

գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ») 145 հ/դ, (2), 122 հ/դ (2), 113 մ/դ (2), 178 հ/դ, 2 հատուկ/դ (3), 197 հ/դ, 53 հ/դ (2), 129հ/դ, 175 մ/դ, 11 հ/դ, 144 հ/դ (3), 136 հ/դ (2)
25-րդ հոդվածի 4-րդ մաս («Պետական ուսումնական հաստատության մեկ դրույքով աշտոնավարող վարչական աշխատողը համապատասխան որակավորման դեպքում համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև ութ դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն: Կես դրույքով պաշտոնավարող և համապատասխան որակավորում ունեցող պետական ուսումնական հաստատության վարչական աշխատողը համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև տասնչորս դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն») hh. 75 հ/դ, 48 հ/դ, 137 հ/դ
24-րդ հոդվածի 3-րդ մաս («Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով...») hh. 75 հ/դ (3), 101 մ/դ, 24 հ/դ, 179 հ/դ, 37 հ/դ, 84 հ/դ, 181 հ/դ, 144 հ/դ (10), 122 հ/դ, 86 հ/դ (2), 176 հ/դ (2)

«Կրթության մասին» ՀՀ օրենք	
44-րդ հոդվածի 5-րդ մաս («Պետական մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթուղթը պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթուղթն է, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:») hh. 191 հ/դ, 174 հ/դ	

ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2013թ. ապրիլի 15-ի հ. 396-Ն հրամանով հաստատված (2013թ. հուլիսի 30-ի հ. 1001 հր. լրաց.) «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգ»	
3-րդ կետ («Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը տրամադրում է հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, նույն հաստատությունում տվյալ առարկան դասավանդած կամ դասավանդող մինչև մեկ դրույք ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցչին») hh. 100 հ/դ, 144 հ/դ	
4-րդ կետ («Հաստատությունում մրցույթ հայտարարվում է տվյալ առարկան դասավանդող ուսուցչին 1 դրույք ծանրաբեռնվածությամբ ապահովելուց հետո») hh. 75 հ/դ, 52 հ/դ	
5-րդ կետ («Մրցույթը հայտարարվում է Թափուր տեղ առաջանալու օրվանից՝ 7-օրյա ժամկետում: Անկախ պատճառներից մրցույթը չկայանալու դեպքում Թափուր տեղը լրացնելու համար պարբերաբար հայտարարվում է մրցույթ՝ մինչև հաղթող ճանաչվելը՝ պահպանելով սույն կարգի պահանջները») hh. 31 հ/դ, 99 մ/դ, 110 հ/դ, 75 հ/դ, 10 հ/դ, 24 հ/դ (2), 26 հ/դ, 76 հ/դ (3), 145 հ/դ, 178 հ/դ, 37 հ/դ (2), Հր. Մաթևոսյան անվ. հ/դ, 6 հ/դ, 155 հ/դ, 90 հ/դ, 162 հ/դ, 66 հ/դ, 44 հ/դ	

<p>6-րդ կետ («Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթը կայանալու, Թափուր տեղը մրցութային կարգով չհամալրվելու կամ մրցութի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում (անկախ պատճառներից), որոշակի ժամկետով պայմանագրով աշխատանքի կարող են ընդունվել համապատասխան մասնագիտ. որակավորում ունեցող անձինք, իսկ լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերի դպրոցներում՝ նաև ուսուցչի որակավորում շնորհող բուհերի հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերի համապատասխան մասնագիտությամբ սովորող ուսանողները»)</p>	<p>հհ. 110 հ/դ, 35 հ/դ, 101 մ/դ, 10 հ/դ (8), 24 հ/դ (2), 157 հ/դ, 26 հ/դ (5), 37 հ/դ (2), 100 հ/դ (2), Հր. Մաթևոսյանի անվ. հ/դ (4), 124 հ/դ, 104 հ/դ (2), 7 հ/դ, 156 հ/դ, 50 հ/դ (5), 123 հ/դ (4), 113 մ/դ, 167 հ/դ, 64 հ/դ, 66 հ/դ, 136 հ/դ (2), 145 հ/դ (5), 135 հ/դ, 178 հ/դ (2)</p>
<p>15-րդ կետ («Մրցութային կարող է մասնակցել Հաստատության տվյալ Թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը»)</p>	<p>հհ. 24 հ/դ (2), 157 հ/դ, 37 հ/դ, Հր. Մաթևոսյանի անվ. հ/դ, 166 հ/դ, 196 հ/դ, 27 հ/դ, 7 հ/դ (3), 172 հ/դ, 128 հ/դ (2), 19 հ/դ, 90 հ/դ, 162 հ/դ, 123 հ/դ (2), 44 հ/դ, 122 հ/դ, 2 հատուկ/դ (3), 197 հ/դ, 53 հ/դ, 113 մ/դ, 175 մ/դ, 144 հ/դ, 136 հ/դ (2), 145 հ/դ (2)</p>
<p>20-րդ կետ («Մրցութային հանձնաժողովը ձևավորվում է մրցութի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ, անվանական կազմը հաստատում է տնօրենը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին»)</p>	<p>հ. 26 հ/դ</p>
<p>21-րդ կետ (« Հանձնաժողովը կազմված է 5 անդամից՝ տնօրեն (տնօրենի պաշտոնակատար), տնօրենի ուսումնական գծով տեղակալ, համապատասխան մասնախմբի ղեկավար, ուսուցիչ, մեկ ուսուցիչ այլ հաստատությունից՝ համաձայնությամբ»)</p>	<p>հհ. 75 հ/դ, 101 մ/դ, 24 հ/դ, 37 հ/դ, 50 հ/դ, 123 հ/դ, 19 հ/դ</p>
<p>9-րդ կետ («Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում, և Թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝ 1) տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում»))</p>	<p>հհ. 7 հ/դ, 66 հ/դ</p>

<p>ՀՀ կառավարության 2010 թ. հոկտեմբերի 14-ի հ. 1391-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ ընդհանուր ծրագրերի իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկ և նկարագրեր»</p>	
<p>3-րդ բաժնի 3-րդ կետ («... ուսումնական աշխատանքի գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմ. մասնագետ, մագիստրոս) և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում»)</p>	<p>հ. 10 հ/դ</p>

<p>4-րդ բաժնի 3-րդ կետ («... ուսումնական հաստատության մասնագիտացված կրթական աջակցությունների աշխատանքի գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում»)</p>	<p>հհ. 35 հ/դ, 27 հ/դ, 144 հ/դ</p>
<p>6-րդ բաժնի 3-րդ կետ («... դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ»)</p>	<p>հհ. 101 մ/դ, 26 հ/դ, 144 հ/դ 67 հ/դ, 155 հ/դ, 176 հ/դ, 19 հ/դ</p>
<p>8-րդ բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետ («Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժության որակավորմամբ»)</p>	<p>հհ. 144 հ/դ, 108 մ/դ, 37 հ/դ, 17 հ/դ, (3), 162 հ/դ, 196 հ/դ, 135 հ/դ (3), 163 հ/դ, 11 հ/դ, 136 հ/դ, 95 մ/դ, 84 հ/դ</p>
<p>9-րդ բաժնի 3-րդ կետ («... հոգեբանը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ»)</p>	<p>հհ. 24 հ/դ, 7 հ/դ (2), 161 հ/դ, 21 հ/դ, 129 հ/դ, 136 հ/դ</p>
<p>10-րդ բաժնի 3-րդ կետ («... սոցիալական մանկավարժի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն (սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք մասնագիտություններ որակավորմամբ»)</p>	<p>հհ. 17 հ/դ, 60 հ/դ, 144 հ/դ (3), 135 հ/դ, 129 հ/դ, 136 հ/դ, 186 հ/դ</p>
<p>11-րդ բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետ («...զինդեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն, սպայական կոչում»)</p>	<p>հ. 169 հ/դ</p>
<p>12-րդ բաժնի 3-րդ կետ («... գրադարանավարի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ»)</p>	<p>հհ. 144 հ/դ, 110 հ/դ, 52 հ/դ, 34 հ/դ, 35 հ/դ, 39 հ/դ, 179 հ/դ (2), 152 հ/դ, 4 հ/դ 37 հ/դ, Հր. Մաթևոսյանի անվ. հ/դ, 175 մ/դ, 74 հ/դ, 68 հ/դ, 104 հ/դ, 161 հ/դ, 49 հ/դ, 19 հ/դ, 135 հ/դ, 1 հ/դ,</p>
<p>13-րդ բաժնի 3-րդ կետ («... լաբորանտի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն:»)</p>	<p>հհ. 95 մ/դ (2), 144 հ/դ</p>

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենք

<p>9.1. մաս («Ուսումնական հաստատությունում «Ֆիզիկական կուլտուրա» առարկան և արտադասարանական մարզական խմբում դասավանդող անձի մասնագիտական կրթությունը պարտադիր է»)</p>	<p>հհ. 10 հ/դ, 24 հ/դ (2), 108 մ/դ, 177 հ/դ, 90 հ/դ, 133 հ/դ</p>
---	--

<p>ՀՀ կառավարության 2007 թ. փետրվարի 1-ի հ. 201-Ն որոշմամբ հաստատված՝ «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները»</p>	
<p>Հավելված N 3, 12-րդ կետ (Հանրակրթական և նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների դասավանդողների աշխատաժամանակի տևողությունը՝ կախված ուսումնական հաստատության տիպից, սահմանվում է շաբաթական 22-33 ժամ)</p>	<p>հ. 155 հ/դ (2)</p>

<p>ՀՀ կառավարության 09.03.2006թ. N 351-ն որոշմամբ հաստատված «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկ»</p>	
<p>118-րդ կետ («Անձնական գործեր (դիմումներ, ինքնակենսագրություններ, հրամանների պատճեններ և քաղվածքներ, անձնական փաստաթղթերի պատճեններ, բնութագրեր, որակավորման թերթեր, կադրերի հաշվառման թերթիկներ)» (պահպանվում է մշտական):</p>	<p>հ. 162 հ/դ</p>

Տեղեկատվությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-HUH» հավելվածի «Մանկավարժներ» բաժնում:

Ուսումնասիրված **160 մանկապարտեզներից 113-ում** մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներ չեն հայտնաբերվել:

Թվով 47 մանկապարտեզներում (30 %) հայտնաբերվել է 79 խախտում (խախտումների թվում ներառված չեն կարգի խախտմամբ մինչև մեկ ամիս ժամկետով ժամանակավոր փոխարինումները, իսկ նմանադիպ խախտումների քաղմակի կրկնությունները նշված են որպես մեկ խախտում), **որից՝**

- 1) տնօրենի ուսումնական գծով տեղակալի (մեթոդիստի) նշանակում՝ **11 մանկապարտեզ (14 մեթոդիստ)**.
- 2) դաստիարակի նշանակում՝ **28 մանկապարտեզ (31 դաստիարակ)**.
- 3) լոգոպեդի նշանակում՝ **2 մանկապարտեզ (2 լոգոպեդ)**.
- 4) երաժշտական դաստիարակի նշանակում՝ **5 մանկապարտեզ (5 երաժշտության դաստիարակ)**.

- 5) ֆիզկուլտուրայի հրահանգչի նշանակում՝ **2 մանկապարտեզ (3 ֆիզհրահանգիչ)**.
 6) պարուսույցի նշանակում՝ **6 մանկապարտեզ (10 պարուսույց)**.
 7) լրացուցիչ կրթության մանկավարժ՝ **12 մանկապարտեզ (14 մանկավարժ)**:

Ստորև բերված աղյուսակում նշված են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները և դրանք խախտած մանկապարտեզները:

N	Իրավական ակտը	Մանապարտեզը
ՀՀ կրթության և գիտության նախարարի 21.04.2011թ. N 416-Ն հրամանով հաստատված «ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրեր»		
1.	3-րդ գլխի, 3-րդ կետի պահանջ. «Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի, տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կրթություն և վերջին 7 տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի կամ մանկավարժական աշխատանքի առնվազն 2 տարվա մանկավարժական գործուն. ստաժ»	h.h. 36, 42, 44 (3), 66, 100, 104, 108, 113 (2), 125, 127, 128
2.	4-րդ գլխի, 3-րդ կետի պահանջ. «Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակը պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ»	h.h. 22, 28, 34, 36, 40, 44, 46, 58, 61, 63, 64, 66, 71, 74, 79, 86, 97, 99, 110, 112 (2), 114, 116, 121 (2), 125, 127, 129, 130, 157 (2)
3.	5-րդ գլխի, 3-րդ կետի պահանջ. »Նախադպրոցական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժի (լոգոպեդի, սուրդոմանկավարժի) , պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա՝ 1) բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժության որակավորմամբ»	h.h. 35, 146
4.	7-րդ գլխի, 3-րդ կետի պահանջ. «Նախադպրոցական ուսումնական հաստատության երաժշտության դաստիարակի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա՝ 1) միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ»	h.h. 48, 58, 86, 98, 105
5.	7-րդ գլխի, 3-րդ կետի պահանջ. «Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա՝ 1) միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ»	h.h. 22 (2), 68
6.	8-րդ գլխի, 3-րդ կետի պահանջ. «Նախադպրոցական ուսումնական հաստատության պարուսույցը (պարի խմբավարը) պետք է ունենա՝ 1) միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան	h.h. 40, 69, 98 (3), 102 (2), 130 (2), 131

	որակավորմամբ»	
7.	8-րդ գլխի, 3-րդ կետի պահանջ. »1) Նախադպրոցական ուսումնական հաստատության լրացուցիչ կրթության մանկավարժը պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ»	h.h. 35, 40, 41 (1), 44, 45, 58 (2), 79, 98, 114, 131, 136 (2), 141

Մանկավարժական աշխատողների՝ օրինակելի հաստիքացուցակով սահմանված հաստիքների թվից (1705.68) պակաս թվով (179.59) հաստիքներ են հատկացվել 141 մանկապարտեզներում (բացառությամբ՝ h.h. 1, 8, 13, 19, 32, 39, 45, 46, 47, 64, 72, 73, 78, 89, 96, 105, 111, 120, 126 մանկապարտեզների):

Խախտվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 26.01.2007թ. N 29-Ն հրամանով հաստատված ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները:

Պակաս հատկացված հաստիքների թվից (179.59) չեն հանվել այն հաստիքները, որոնք հատկացվել են օրինակելի հաստիքացուցակով սահմանվածից ավելի, օրինակ՝ սահմանված է 1 դրույք մեթոդիստի հաստիք, սակայն հատկացվել է 1.5 դրույք:

Ուսումնասիրության ժամանակ h.h. 114 և 160 մանկապարտեզների գործունեությունը դադարեցված էր՝ հիմնանորոգման մեջ գտնվելու պատճառով:

Տեղեկատվությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-NUH» հավելվածի «ՆՈՒՀ մանկավարժներ» բաժնում:

10. «Ֆիզկուլտուրա» առարկայի՝ համապատասխան մասնագետի կողմից դասավանդումը

Քաղաքապետարանի ենթակայության 155 դպրոցներից միայն 52-ում են «Ֆիզկուլտուրա» առարկայի բոլոր ժամերը դասավանդում համապատասխան որակավորում ունեցող մասնագետները:

Թվով 103 դպրոցում ֆիզկուլտուրայի որոշակի ժամեր դասավանդում են համապատասխան որակավորում չունեցող մասնագետները:

Հ. 1 և h. 59 հիմնական դպրոցների «Ֆիզկուլտուրա» առարկան դասավանդող անձինք չունեն համապատասխան որակավորում:

Չի ապահովվել «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 9.1-ին մասի («Ուսումնական հաստատությունում «Ֆիզիկական կուլտուրա» առարկան և արտադասարանական մարզական խմբում դասավանդող անձի մասնագիտական կրթությունը պարտադիր է») պահանջի կատարումը:

Տեղեկատվությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-HUH» հավելվածի «Ֆիզկուլտուրա» բաժնում:

11. Ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի պահանջների կատարումը

Ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի պահանջների ուսումնասիրության արդյունքում պարզվել է,

1) Վաղարշ Վաղարշյանի անվան հ. 80 հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջացել է 2017 թվականի հուլիսի 6-ին, Երևանի քաղաքապետի՝ 2017 թվականի օգոստոսի 25-ի հ. 384-Ա կարգադրությամբ դպրոցի փոխտնօրենը նշանակվել է տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

Մինչև ուսումնասիրությունն ավարտվելու օրը՝ 2017 թվականի դեկտեմբերի 7-ը, դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ դեռ չէր հայտարարվել:

Չի ապահովվել ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 2-րդ ենթակետի («...հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին») և 3-րդ կետի («խորհուրդն առավելագույնը եռամսյա ժամկետում, հաշված տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից, կազմակերպում և անցկացնում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ») պահանջների կատարումը:

2) 2011 թվականից մինչև 2017 թվականի օգոստոսի 14-ը մանկապարտեզների տնօրենների թափուր տեղերի մրցույթներ չեն հայտարարվել:

Չի կատարվել «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «ե» կետի պահանջը (Տեղական ինքնակառավարման մարմինները՝ «իրականացնում են համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար աշխատողների ընտրությունը, նշանակումը և պաշտոնից ազատումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»):

Չի ապահովվել Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 22-ի Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի և ատեստավորման ընթացակարգերը հաստատելու մասին հ. 899-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարումը:

3) Հ. 120 մանկապարտեզի տնօրենի ընտրությունն իրականացվել է խախտումով. մինչև մրցույթին մասնակցելու օրը հավակնորդը չի ունեցել վերջին տասը տարում երկու տարվա ստաժ:

Խախտվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը հաստատելու մասին» հ. 416-Ն հրամանով հաստատված հավելվածի 2-րդ բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը («նախադպրոցական ուսումնական հաստատության

տնօրենի պաշտոն գրադեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս), վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երկու տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ»):

Մանկապարտեզների տնօրենների անձնական գործերում առկա չեն եղել աշխատանքային գրքույկները (Սոցապ ներկայացնելու պատճառով), ուստի տնօրենների ստաժը հաշվարկվել է նրանց անձնական թերթիկներում առկա տեղեկատվության հիման վրա:

Տեղեկատվությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-HUH» և «Havelvac-Yerevan-NUH» հավելվածների «Տնօրեն» բաժիններում:

12. Կառավարման խորհրդի անդամների առաջադրումը, դպրոցի մանկավարժական, ծնողական խորհուրդների որոշումների հիման վրա խորհրդի անվանական կազմի հաստատումը կամ կարգի պահանջների խախտման դեպքում՝ խորհրդի անվանական կազմում առաջարկված անձի կամ անձանց թեկնածությունը մերժելը, քաղաքապետի կողմից առաջադրված խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ նախարար) 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգում 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 956-Ն հրամանով (ուժի մեջ է մտել 2015 թվականի դեկտեմբերի 25-ին) կատարված լրացումների՝ Երևանի քաղաքապետը 30-օրյա ժամկետում պետք է կազմակերպեր և ապահովեր դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների անդամների ընտրության գործընթացը:

Վերոնշյալ հրամանը նախարարի կողմից դեռևս չընդունված (մեկ օր առաջ)՝ 2015 թվականի նոյեմբերի 11-ին, վարչությունը քաղաքապետարանի ենթակայության դպրոցներ է ուղարկել շրջաբերական՝ դպրոցների կառավարման խորհուրդների կազմում համապատասխան փոփոխություններ կատարելու և առաջադրված թեկնածուներին մինչև 2015 թվականի դեկտեմբերի 17-ը վարչություն ներկայացնելու վերաբերյալ:

Բոլոր դպրոցները, **բացառությամբ հ. 120 հիմնական դպրոցի**, ներկայացրել են պահանջված փոփոխությունները: Հ. 120 հիմնական դպրոցում այդ ընթացքում հայտարարված է եղել տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ, ինչի պատճառով դպրոցի խորհրդի կազմում փոփոխություն չի իրականացվել: Կայացած մրցույթի արդյունքում տնօրեն նշանակվել է Երևանի քաղաքապետի 2016 թվականի մարտի 9-ի հ. 739-Ա, իսկ խորհրդի կազմը հաստատվել է 2016 թվականի հոկտեմբերի 12-ի հ. 3553-Ա որոշումներով:

Չի ապահովվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի 1-ին կետով սահմանված՝ 30-օրյա ժամկետում

դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինների անդամների ընտրության գործընթացը կազմակերպելու պահանջի կատարումը:

Տեղեկատվությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-HUH» հավելվածի «Խորհուրդ» բաժնում:

13. Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, երեխաների ընդգրկումը քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատություններ (պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներ, դուրս մնալու պատճառը, ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնի տվյալների առկայությունը)

Նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը կատարվում է «Մանկապարտեզ» էլեկտրոնային համակարգով, իսկ դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը կատարվում է եռամսյակը մեկ անգամ դպրոցների կողմից ներկայացված էլեկտրոնային տեղեկատվության հիման վրա:

14. Երևանի, ՀՀ մարզերի, ԼՂՀ-ի, արտերկրի հանրակրթական ուսումնական հաստատություններից Երևանի հանրակրթական ուսումնական հաստատություններ սովորողների ընդունելության հաշվառումը

Երևանի, ՀՀ մարզերի, ԼՂՀ-ի, արտերկրի հանրակրթական ուսումնական հաստատություններից Երևանի հանրակրթական ուսումնական հաստատություններ սովորողների ընդունելության հաշվառում չի իրականացվել վարչությունում:

15. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառումը, նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություններում, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրումը

Ըստ վարչության ներկայացրած տեղեկատվության՝ 2016 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 31-ը ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների թիվը կազմել է 2011 (երկու հազար տասնմեկ), 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը կազմել է 2121 (երկու հազար հարյուր քսանմեկ): Բոլորն էլ ունեցել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայական և ընդգրկված են եղել ուսումնական հաստատություններում (օրենքով սահմանված կարգով):

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ դպրոցների ներկայացրած տեղեկատվության համաձայն ներառական կրթություն իրականացնում է 56 դպրոց, ԿԱՊԿՈՒ սովորողների ընդհանուր թիվը մինչև 2017 թվականի նոյեմբերի 15-ը կազմում է 2328, որոնցից վկայական ունեն 2324-ը (4 վկայագրում ընթացքի մեջ է):

Տեղեկատվությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-HUH» հավելվածի «ԿԱՊԿՈՒ» բաժնում:

Հ.հ. 42, 78, 92, 101, 109, 114, 146, 160 մանկապարտեզների տնօրենների ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ նշված մանկապարտեզներ են հաճախում ընդհանուր թվով **165** ԿԱՊԿՈՒ երեխաներ, որոնից **82**-ի կրթական կարիքների վերաբերյալ **առկա չէ հոգեբանամանկավարժական եզրակացություն:**

Տեղեկատվությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-NUH» հավելվածի «ԿԱՊԿՈՒ» բաժնում:

16. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառման կարգի պահանջների կատարումը

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառմանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ դպրոցներում սովորում է առանց ծնողական խնամքի մնացած 69 երեխա, որոնց հետ դպրոցներում տարվում են համապատասխան աշխատանքներ:

17. Ուսուցիչների ատեստավորման կարգի պահանջների կատարումը

Ուսուցիչների ատեստավորմանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 03.12.2016թ. «Երևան քաղաքի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» հ. 892-Ա հրամանի համաձայն 2016 թվականի նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 21-ը ներառյալ իրականացվել է դպրոցների ուսուցիչների ատեստավորում:

Վերապատրաստված **873** ուսուցիչներից ներկայացվել է ատեստավորման թվով **151** դպրոցների **778** ուսուցիչ:

778 ուսուցչի համար, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 16-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, ատեստավորման հանձնաժողովը կայացրել է **«Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» որոշումը:**

«Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին» որոշումը չի կայացվել ոչ մի ուսուցչի համար:

18. Քաղաքային, հանրապետական և միջազգային օլիմպիադաներին սովորողների մասնակցության կազմակերպումը. ոլորտը, մասնակիցների թիվը, ուսումնական հաստատությանը, ուսուցչին, մասնակցին խրախուսելը

Քաղաքային, հանրապետական և միջազգային օլիմպիադաներին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է հետևյալը.

Երևանի քաղաքապետի՝ 09.02.2016թ. հ.108-Ա կարգադրությամբ հաստատվել է ՀՀ դպրոցականների 2015-2016 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների՝ Երևանի տարածքային և քաղաքային փուլերը նախապատրաստող և անցկացնող կազմկոմիտեի և առարկայական հանձնաժողովների անդամների անվանական կազմերը:

2015-2016 ուստարում մարզային փուլի մասնակիցների թիվը 2186 է, որից 435-ը իրավունք է ստացել մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին:

Մարզային փուլում դիպլոմների են արժանացել թվով 315 աշակերտ, որից.

1-ին կարգ -45 աշակերտ,

2-րդ կարգ -112 աշակերտ,

3-րդ կարգ -158 աշակերտ:

Երևանի քաղաքապետի՝ 02.02.2017թ. հ.53-Ա կարգադրությամբ հաստատվել է ՀՀ դպրոցականների 2016-2017 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների՝ Երևանի տարածքային և քաղաքային փուլերը նախապատրաստող և անցկացնող կազմկոմիտեի և առարկայական հանձնաժողովների անդամների անվանական կազմերը:

2016-2017 ուստարում մարզային փուլի մասնակիցների թիվը 2356 է, որից 595-ը իրավունք է ստացել մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին:

Մարզային փուլում դիպլոմների են արժանացել թվով 354 աշակերտ, որից.

1-ին կարգ -74 աշակերտ,

2-րդ կարգ -109 աշակերտ,

3 -րդ կարգ -175 աշակերտ:

Օլիմպիադայի կազմակերպիչները արժանացել են դրամական պարգևի: Մասնակից բոլոր դիպլոմակիրները քաղաքապետի կողմից ստացել են համապատասխան դիպլոմներ, իսկ 1-ին կարգի դիպլոմակիրները՝ նաև նվերներ:

19. Սովորողների՝ էքստեն լարգով իրականացված փոխադրական քննությունների հիմքերը, այդ թվում՝ քննություններին մասնակցելու թույլտվությունը, էքստեն լարգով քննություններին մասնակցողների վերաբերյալ մանկավարժական խորհրդի որոշման և դպրոցի տնօրենի կից գրության առկայությունը

Էքստեն լարգով փոխադրական քննություններ իրականացրած դպրոցները և սովորողների թիվը ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Ուսումնական տարիները	Դպրոցները	Փոխադրված սովորողների թիվը
2014-2015	8, 130, 137, 161	7
2015-2016	8, 19, 37, 55, 71, 117, 130, 132, 143, 155, 166, 188	19
2016-2017	8, 19, 50, 51, 52, 56, 61, 76, 78, 88, 130, 135, 136, 161, 168	20

Քննական արձանագրությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ հ.հ. 52, 71, 137, 155, 161, 168 հիմնական դպրոցներում բոլոր կամ առանձին առարկաների քննություններ անցկացվել են նույն օրը, նույն ժամին:

Տեղեկատվությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-HUH» հավելվածի «**էքստեն**» բաժնում:

20. Մեդալի հավակնորդ շրջանավարտներին վերաբերող տվյալների հավաստիությունը և գործընթացը

Գերազանցության մեդալի (այսուհետ՝ մեդալ) հավակնորդ շրջանավարտներին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ Երևանի հ.87 միջնակարգ դպրոցի 2016-2017 ուստարվա շրջանավարտներ Անահիտ Մկրտչյանը, Նաիրա Համբարձումյանը և Գոհար Կոստանդյանը դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրվել են որպես մեդալի հավակնորդներ: Պետական ավարտական քննություններից հետո հավակնորդներից երկուսը չեն ապահովել մեդալի հավակնորդին ներկայացվող պահանջների կատարումը: Մեդալ ստացել է Նաիրա Համբարձումյանը:

21. «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դաստիարակ» անվանակարգերին ներկայացված մանկավարժների ընտրության սկզբունքները, հավաստիությունը, թափանցիկությունը

Երևանի քաղաքապետի՝ 15.04.2016թ. հ. 348-Ա կարգադրությամբ հաստատվել է «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների՝ Երևանի քաղաքային փուլը և 27.04.2016թ.՝ Երևան քաղաքի վերոնշյալ մրցույթի գնահատող հանձնաժողովների կազմերը:

2016 թվականին մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել թվով 10 ուսուցիչներ, թվով 12 տնօրեն և թվով 8 դաստիարակ, որոնց մոտ կատարվել են դասալսումներ, ուսումնասիրություններ, լսել են բաց-պարապմունքներ և դիտել առօրյան:

Այնուհետև անցկացվել է «Կլոր սեղան», որի արդյունքում մեկական ներկայացուցիչ ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Նույն մասնակիցներից մեկական ներկայացուցիչ ճանաչվել է Երևան քաղաքի մրցույթի հաղթող:

2017 թվականին մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել թվով 18 ուսուցիչներ, թվով 15 տնօրեն և թվով 7 դաստիարակ, որոնց մոտ կատարվել են դասալսումներ, ուսումնասիրություններ, լսել են բաց-պարապմունքներ և դիտել առօրյան:

Այնուհետև, անցկացվել է «Կլոր սեղան», որի արդյունքում մեկական ներկայացուցիչ ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Նույն մասնակիցներից մեկական ներկայացուցիչ ճանաչվել է Երևան քաղաքի մրցույթի հաղթող:

22. Ավարտական փաստաթղթերի ստացումը, պահպանությունը և բաշխումը, ամփոփաթերթերի առկայությունը

Ըստ առկա ամփոփաթերթերի և արձանագրությունների՝ ավարտական փաստաթղթերի ստացումը, պահպանությունը և բաշխումը կատարվել են սահմանված կարգով:

23. ՀՀ կրթության պետական տեսչության կողմից իրականացված տեսչավորումների, ուսումնասիրությունների արդյունքում տեղական ինքնակառավարման մարմնի պարտականություններից բխող անհրաժեշտ աշխատանքների կատարումը, ուսումնական հաստատություններին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողությունը, հաշվետվությունների քննարկումը

Ըստ վարչության ներկայացրած տեղեկատվության՝ 2017թ. սեպտեմբերի 15-ին վարչության պետի մոտ տեղի է ունեցել խորհրդակցություն:

Ստորև ներկայացվում է խորհրդակցության արձանագրությունից հատված՝

«*Խորհրդակցությունը վարեց աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Կրիստինե Ա. Սյրեփանյանը: Մասնակցեցին Երևանի քաղաքապետարանի՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններ ունեցող հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող հիմնական դպրոցների և ՀՀ ԿԳ նախարարության «Թեժ գիծ» հեռախոսակապով ահազանգեր ստացված դպրոցների փնտրենները: Վերջիններիս /հ.հ. 6, 11, 88, 106, 108, 122, 124, 133, 150, 166, 197 դպրոցներ/ մոտ կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ահազանգով ներկայացված փաստարկները իրականությանը չեն համապատասխանում:*

Քննարկվեց ՀՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության կողմից 2017թ. մայիսի 15-19-ը տեղի ունեցած ուսումնասիրության ընթացքում ռուսական դասարաններում սովորողների ընդունելության իրավական հիմքերում բացահայտված թերությունների, բացթողումների և խախտումների վերացման ուղղությամբ հանձնարարականների կատարողականը:

Տնօրենները ներկայացրին, որ արձանագրված թերությունները հիմնականում վերացված են, միաժամանակ նշեցին՝ որպես խախտում արձանագրված որոշ դեպքեր հիմնավորված չեն. երեխան ռուսական դասարան է ընդունվել ծնողներից մեկի այլազգի լինելու հիմքով: Մայրը ռուս է, փաստը վավերացված է ծննդյան վկայականում, սակայն դիտարկվել է խախտում /հ. 124, հ. 8/:

Աշխատակազմի հանրակրթության վարչության պետի կողմից հանձնարարվեց փնտրեններին.

-Ապահովել սովորողների անձնական գործերում ծնողի կողմից ներկայացվող բոլոր պահանջվող փաստաթղթերի առկայությունը:

-Հետագա գործունեության ընթացքում բացառել աշխատանքում թերությունների և խախտումների առկայությունը:

Կցվում են ռուսական դասարաններ ունեցող դպրոցների փնտրենների գրությունները ՀՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության կողմից տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ: Երևանի Սյր. Զորյանի անվ. հ. 56 դպրոցի դասվարի նկատմամբ կիրառվել է «Նկատարողություն» կարգապահական տույժ՝ երեխայի նկատմամբ մանկավարժին անհարիր վերաբերմունքի համար:

Երևանի Վ. Վաղարշյանի անվան հ. 80 դպրոցի փնտրենը ազատվել է աշխատանքից՝ «2015-2016 ուսումնական տարվա սովորողների գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման

աշխատակարգը և ժամանակացույցը հաստատելու մասին» հ. 415-Ա/Ք հրամանի պահանջների խախտման պատճառով: Ներկաներին հանձնարարվեց առաաջնորդվել սահմանված կարգերով, ինչպես նաև իրենց ղեկավարած մանկավարժական կոլեկտիվներում ներկայացնել ուսուցչի էթիկայի կանոնները»:

Մտահոգիչ է, որ վերոնշյալ խորհրդակցության ընթացքում հիմք են ընդունվել հ.հ. 8 և 124 դպրոցների տնօրենների պատճառաբանություններն այն մասին, որ ՀՀ կրթության պետական տեսուչների կողմից **«որպես խախտում արձանագրված որոշ դեպքեր հիմնավորված չեն»:**

Անդրադառնանք «որոշ դեպքերին»՝

1) Հ. 8 հիմնական դպրոցում հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմված արձանագրությունը ստորագրվել է դպրոցի տնօրենի կողմից առանց որևէ առարկության կամ գրավոր կարծիքի: Մեջբերում արձանագրությունից՝ **«III դասարանի սովորողներ Ալեն Վահագնի Զաքարյանի (III⁶ դասարան, ծննդյան վկայականում երեխայի ազգության համար հատկացված տեղում գրանցված է ազգանունը, իսկ դրա տակ՝ «ՀՀ» գրառումը, հոր ազգությունը նշված է հայ, մոր ազգությունը նշված չէ, ծնողները ՀՀ քաղաքացի են, մոր անձնագրի «Նշումներ» էջում ազգությունը նշված է «ուկրաինացի») և Տիգրան Յուրիի Զաքարյանի (III⁷ դասարան, ծննդյան վկայականում և՛ երեխայի, և՛ ծնողների ազգությունը նշված է «հայ») անձնական գործերում առկա չեն ռուսերենով ուսուցմամբ դասարան ընդունելու հիմքերը (համապատասխան փաստաթղթերը):**

Չի ապահովվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգ» N 1640-Ն հրամանով հաստատված կարգի 5-րդ և (կամ) 6-րդ կետերի պահանջներն ապահովող փաստաթղթերի («5. Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կատարվում է **սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ** կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը: 6. Օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցողները (նրանց օրինական ներկայացուցիչը), ինչպես նաև այն դեպքում, երբ ծնողներից մեկն է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, մյուսը՝ սույն կետում նշվածներից որևէ մեկը, իրենց երեխայի ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են ինքնուրույն: Մնացած դեպքերում, երբ սովորողի ծնողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, ուսուցման լեզուն հայերենն է:») **առկայությունը»:**

Ինչպես երևում է արձանագրությունից՝ 2016-2017 ուստարվա III⁶ դասարանի սովորող **Ալեն Վահագնի Զաքարյանի** ծննդյան վկայականում ազգության համար հատկացված տեղում նշված են երեխայի ազգանունը և «ՀՀ» բառը: Եթե նշված լիներ «ուկրաինացի», ապա դա հիմք կհանդիսանար երեխային ռուսերենով ուսուցմամբ դասարան ընդունելու համար: Ուսումնասիրության ընթացքում կրթության պետական տեսուչները առաջարկել են դպրոցի

տնօրենին՝ որևէ հիմնավորում ներկայացնել երեխայի՝ ազգությամբ ուկրաինացի լինելու վերաբերյալ, ինչը չի ներկայացվել:

Տիգրան Յուրիի Չաքոյանի դեպքում նույնպես խախտումն առկա է (III⁷ դասարան, ծննդյան վկայականում և՛ երեխայի, և՛ ծնողների ազգությունը նշված է «հայ», *պապը ասորի է*):

2) Նույն պատկերն է Հ. 124 հիմնական դպրոցի 1-ին դասարանի սովորող **Յուլիաննա Կարապետյանի** պարագայում: Սովորողի ծննդյան վկայականում ազգությունը նշված է «հայ», (չնայած՝ մայրն ազգությամբ ռուս է), ուստի սովորողի ընդգրկումը դպրոց պետք է կատարվի **սովորողի (այլ ոչ թե նրա ծնողի) ազգային (մայրենի) լեզվով, այսինքն՝ հայերենով, ուսուցմամբ դասարանում:**

Վերոնշյալ քննարկման ընթացքում հաշվի չեն առել այն հանգամանքը, որ ընդունելության կարգում կատարված փոփոխության համաձայն՝ ռուսերենով ուսուցմամբ դասարան ընդունելու հիմքը ոչ թե ծնողի, այլ երեխայի ազգությունն է, ընդ որում՝ նշված երեք սովորողների ծնողներն էլ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են:

Վարչությունում իրականացված քննական ընթացքում տնօրենների ներկայացրած տեղեկատվությունը ընդունվել է ի գիտություն և չի ապահովվել ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից տրված կատարման համար պարտադիր հանձնարականների կատարումը:

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից **մանկապարտեզներում** իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով մանկապարտեզների տնօրեններին տրված կատարման համար պարտադիր հանձնարականների կատարողականների ուսումնասիրությունից պարզվել է՝

1) **հանձնարարականներն ամբողջությամբ կատարել են՝** հ.հ. 67 և 72 մանկապարտեզները.

2) **հանձնարարականները մասամբ են կատարել՝** հ.հ. 22, 24, 25, 26, 27, 30, 33, 63, 64, 69, 74, 76-86, 88, 92-95, 97, 127-132, 134-150, 152, 155-162 մանկապարտեզները.

3) **հանձնարարականներն ամբողջությամբ չեն կատարել՝** հ.հ. 23, 28, 29, 32, 34, 45, 66, 71, 73, 75, 87, 91, 133, 151, 153 մանկապարտեզները:

Տեղեկատվությունը ներկայացված է «Havelvac-Yerevan-NUH» հավելվածի «Հանձնարարական» բաժնում:

24. Քաղաքացիների՝ կրթության բնագավառին առնչվող առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկումը սահմանված ժամկետներում

Քաղաքացիների՝ կրթության բնագավառին առնչվող առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման ընտրանքային ուսումնասիրությունից պարզվել է, որ գործընթացներն իրականացվել են սահմանված ժամկետներում:

2014-2017 թվականների ընթացքում վարչությունը ստացել է դիմումներ և գրություններ քաղաքացիներից և տարբեր մարմիններից՝

2014 թվականին՝ 332 դիմում և 10 գրություն,
2015 թվականին՝ 254 դիմում և 15 գրություն,
2016 թվականին՝ 255 դիմում, և 10 գրություն,
2017 թվականին (01/01/2017- 04/12/2017թ.թ.)՝ 95 դիմում և 7 գրություն:

25. Նախադպրոցական կրթության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին մասնակցությունը, փորձարարական և նորարարական գործունեության իրականացման կազմակերպումը

Ըստ վարչության ներկայացրած տեղեկատվության՝ համակարգվել է մանկապարտեզների նախադպրոցական կրթության փորձարարական և նորարարական գործունեությունը:

Կազմակերպվել են համապատասխան քննարկումներ, որոնց ընթացքում առաջարկվել է ներկայացված ծրագրերը համապատասխանեցնել պետական կրթական չափորոշիչի պահանջներին, ինչպես նաև ապահովել համապատասխան դիդակտիկ պարագաներով և նյութերով:

Ծրագրի շրջանակում, հ.հ. 33, 43, 151 մանկապարտեզներում, «Նոտաների աշխարհում», «Աճուրդ», «Ընտանիքի բյուջե» թեմաներով պարապմունքները դիտարկվել են վարչության համապատասխան մասնագետների կողմից:

Կազմակերպվել են քննարկումներ: Ելնելով ծրագրերի արդյունավետությունից՝ իրականացվել է փորձի մասսայականացում՝ Երևանի մանկապարտեզների մեթոդիստների, դաստիարակների մասնակցությամբ:

Ելնելով ուսումնասիրության արդյունքներից, առաջարկում ենք՝

ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքը ներկայացնել ՀՀ կրթության և գիտության, տարածքային կառավարման և զարգացման նախարարներին, Երևանի քաղաքապետին:

Առկա են ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Առդիր՝ հավելվածները («*Havelvac-Yerevan-HUH*»՝ 7 *բաժին* և «*Havelvac-Yerevan-NUH*»՝ 5 *բաժին*):

ՀՀ կրթության ավագ պետական տեսուչներ՝ Ռախսա Գալստյան, Արմեն Վիրաբյան,
ՀՀ կրթության պետական տեսուչներ՝ Լաուրա Սամվելյան, Աիդա Բարսեղյան,
Գայանե Ինիջյան, Արամ Խաչատրյան,
Գայանե Շահնազարյան, Լեյլի Սարգսյանց,
Աղավնի Աղաբեկյան, Արմենուի Բարսեղյան